ՄՄԿ Մեկնաբանություն 25
Շահութահարկ. փոփոխություններ կազմակերպության կամ նրա բաժնետերերի հարկային կարգավիճակում

Հղումներ

- *ՀՀՍՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում (2007 թ. վերանայված տարբերակ)*
- ՀՀՍՍ 8 *Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*
- ՀՀՍՍ 12 *Շահութահարկ*

Հարցադրում

1 Կազմակերպության կամ նրա բաժնետերերի հարկային կարգավիճակի փոփոխությունը կարող է հետևանքներ ունենալ կազմակերպության համար՝ ավելացնելով կամ պակասեցնելով նրա հարկային պարտավորությունները կամ ակտիվները: Սա կարող է պատահել, օրինակ, կազմակերպության բաժնային գործիքների՝ բորսայական գնանշման գրանցման կամ կազմակերպության սեփական կապիտալի վերակազմակերպման ժամանակ: Սա կարող է նաև պատահել այն ժամանակ, երբ վերահսկող բաժնետերը տեղափոխվում է արտասահմանյան երկիր: Այդպիսի իրադարձության արդյունքում կազմակերպությունը կարող է հարկվել այլ կերպ. այն կարող է, օրինակ, շահել կամ կորցնել հարկային արտոնություններ կամ հետագայում ենթակա լինել հարկման այլ դրույքաչափերի:

2 Կազմակերպության կամ նրա բաժնետերերի հարկային կարգավիճակի փոփոխությունը կարող է անմիջական ազդեցություն ունենալ կազմակերպության ընթացիկ հարկային պարտավորությունների կամ ակտիվների վրա: Փոփոխությունը կարող է նաև ավելացնել կամ պակասեցնել կազմակերպության կողմից ճանաչված հետաձգված հարկային պարտավորությունները և ակտիվները՝ կախված այն բանից, թե հարկային կարգավիճակի փոփոխությունն ինչ ազդեցություն կունենա կազմակերպության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի փոխհատուցման կամ մարման արդյունքում առաջացող հարկային հետևանքների վրա:

3 Հարցն այն է, թե կազմակեպությունն ինչպես պետք է հաշվառի իր կամ իր բաժնետերերի հարկային կարգավիճակի փոփոխության արդյունքում առաջացած հարկային հետևանքները:

Փոխհամաձայնություն

4 Կազմակերպության կամ նրա բաժնետերերի հարկային կարգավիճակի փոփոխությունը չի հանգեցնում շահույթից կամ վնասից դուրս ճանաչված գումարների ավելացմանը կամ պակասեցմանը: Հարկային կարգավիճակի փոփոխության ընթացիկ և հետաձգված հարկի գծով հետևանքները պետք է ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, եթե միայն այդ հետևանքները չեն վերաբերում այն գործարքներին ու իրադարձություններին, որոնք հանգեցնում են, տվյալ կամ մեկ այլ ժամանակաշրջանում, սեփական կապիտալի ճանաչված գումարի կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված գումարի ուղղակիորեն նվազեցման կամ ավելացման: Այն հարկային հետևանքները, որոնք վերաբերում են, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, սեփական կապիտալի ճանաչված գումարի փոփոխություններին (որոնք չեն ներառվում շահույթում կամ վնասում), պետք է ուղղակիորեն նվազեցվեն սեփական կապիտալից կամ ավելացվեն դրան: Այն հարկային հետևանքները, որոնք վերաբերում են այլ համապարփակ եկամտում ճանաչված գումարներին, պետք է ճանաչվեն այլ համապարփակ եկամտում:

Փոխհամաձայնության ամսաթիվը

1999 թ. օգոստոս

Ուժի մեջ մտնելը

Սույն փոխհամաձայնությունը ուժի մեջ է մտնում 2000 թ. հուլիսի 15-ին: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն ՀՀՍՍ 8-ին համաձայն:

ՀՀՍՍ 1-ը (2007 թ. վերանայված տարբերակը) փոփոխության է ենթարկել ՖՀՍՍ-ներում օգտագործվող տերմինները: Բացի այդ, լրացումներ են կատարվել 4-րդ պարագրաֆում: Կազմակերպությունը պետք է այդ փոփոխությունները կիրառի 2009 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը ՀՀՍՍ 1-ը (վերանայված՝ 2007 թ.) կիրառում է ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա փոփոխությունները պետք է կիրառվեն այդ ավելի վաղ ժամանակաշրջանի համար: